

Մասնաճյուղից բավարարվածության 2016-17 ուստարվա առցանց և 2015-17թթ.

ուսանողական հարցման արդյունքների

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

31.08.2017թ.

Ցանկացած բուհի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են բավարարվում ներքին շահակիցների, տվյալ դեպքում ուսանողության կարիքները: Այն առնչվում է ի շահ ուսանողության բուհական համակարգի կառուցվածքային տարբեր տարրերի կազմակերպված ու ներդաշնակ գործունեության հետ: Այդ գործունեությունից բավարարվածության աստիճանը, լինելով ուսումնական ակտիվության իրական իրան, միաժամանակ հենց այն սուբյեկտիվ ցուցանիշն է, որով ուսանողները գնահատում են համապատասխան ստորաբաժանումների փոխհամաձայնեցված գործունեության արդյունավետությունը: Բավարարվածությունը բացահայտելու նպատակով, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետների կողմից, 2015-17թթ. բակալավրական կրթության ուսանողության շրջանում անցկացվել են հարցումներ, որոնց արդյունքներն ու որոշակի վերլուծությունը ներկայացնում ենք ստորև:

**2015 թվականի** հարցումն իրագործվել է համատարած սկզբունքով, այսինքն գործնականում այստեղ ընդգրկվել են առկա ուսուցման բոլոր ուսանողները և հեռակայի՝ 100 ուսանող: Բնականաբար, առկա ուսուցման սովորողների շրջանում հարցումն անցկացնելիս ներկայացուցչության հարց չի դրվել: Հեռակայի 100 սովորողին ընտրելիս, որոշակի նկատառումներից ելնելով չեն ընդգրկվել 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները (ուսումնական տարվա ընթացքում նրանք անհամեմատ ավելի քիչ են առնչվում բուհի հետ՝ 2-3 ամիս ու ենթադրվել է, որ օբյեկտիվորեն մեծ մասը չունեն ցանկալի համարժեքության կարծիք կազմակերպիչներին հուզող խնդիրների վերաբերյալ): Բարձր կուրսերի համար մոտավորապես պահպանվել են համամասնություններն ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների: **2016 թվականի** հարցման մեջ կիրառվել է քվոտային ընտրանքի մեթոդը, ըստ որի 5,0 տոկոս թույլատրելի սխալի և հետևությունների 95,0 տոկոս հավանականությամբ բավարար մեծ թվերի աղյուսակի օգնությամբ ընտրվել են առկայի 161 և հեռակայի՝ 117 ուսանող (հիմնականում բարձր կուրսերից): Ըստ այդմ, առկա ուսուցման շրջանակում իրագործվել է համամասնական ընտրություն ըստ կուրսի և ուսանողների սեռի: Պատահականությունը, որպես Մեծ թվերի օրենքին բավարարող պահանջ բավարարվել է վերջին քայլով (երբ տվյալ կուրսի ու սեռի **n** քանակությամբ ուսանողներից, վիճակահանության օգնությամբ, ընտրվել է անհրաժեշտ **n'** քանակությունը): Հարցման անանունությունը ապահովելու և ինֆորմացիայի հավաստիության մեծացման նկատառումներից ելնելով պատասխանողների սեռը և կուրսը նշել են գրուցավարները: **2017 թվականի** հարցումն անց է կացվել առցանց եղանակով, ինչը թերևս անանունությունը ապահովելու ավելի ուժեղ «գործիք» է: Այստեղ գործնականում ընտրվել են 1-ինից 3-րդ կուրսի բոլոր ուսանողները: Հարցաշարի հարցադրումների ընդհանրությունը և երեք հարցումների ներկայացուցչության հիմնավորումները թույլ են տալիս համադրել դրանց արդյունքները և կատարել որոշակի հետևություններ: Հարցումների ժամանակահատվածը՝ կիսամյակի միջնամասում, պատահաբար չեն ընտրվել: Դա թերևս ուսանողների ուսումնական մտահոգությունների «ամենաթույլ» ժամանակահատվածն է, երբ նրանք դեռևս ինքուստ մտատանջված չեն առաջիկա քննաշրջանով, իսկ առաջին կուրսեցիներն արդեն մեկ կիսամյակի

ուսումնասրության ու քննաշրջանի փորձ ունեն: Այսինքն, օբյեկտիվորեն և համեմատաբար խաղաղ հոգեվիճակում բոլոր կուրսերի ու ֆակուլտետների ուսանողները կարող են գնահատել բուհի տարբեր կառույցներից ստացած տպավորությունները:

Հարցաշարում հարցեր են, որոնք բացահայտում են ուսանողների տեղեկացվածությունը և բավարարվածությունը խորհրդատվական ծառայություններից, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքից, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ուսանողական խորհրդի աշխատանքներից, էլեկտրոնային կայքից:

Բավարարվածությունը գնահատվել է 5-բալանի սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր, իսկ 5-ը՝ ամենաբարձր գնահատականն է:

**Աղյուսակ 1.**

<i>Բավարարվածությունը մասնաճյուղի հետևյալ ռեսուրսներից</i>	<b>4 գնահ.</b>	<b>5 գնահ.</b>	<b>4 և 5 գնահ.</b>	<b>%</b>
լսարանների կահավորումից	136	142	278	<b>69,0%</b>
լսարանների տեխնիկական միջոցներից	130	173	303	75,2%
մասնագիտական գրականության առկայությունից	143	91	<b>234</b>	<b>58,1%</b>
ընթերցասրահի հարմարավետությունից	110	203	<b>313</b>	<b>77,7%</b>
ջեռուցումից	117	128	245	60,8%
բուժկետի ծառայություններից	84	195	279	76,9%
սանիտարահիգիենիկ վիճակից	150	138	288	71,5%
սննդի և հանգստի պայմաններից	104	141	245	<b>69,2%</b>

Աղյուսակ 1-ում բերված են ուսումնական ռեսուրսներից բավարարվածության 2016-17 ուստարվա հարցման տվյալները բացարձակ թվերով և տոկոսներով՝ ընդհանուր թվի համեմատ: Ըստ այդ տվյալների ամենօրյա ուսումնական կյանքի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են լսարանների հարմարավետությունը, կահավորումը, նրանում առկա տեխնիկական միջոցները, ընթերցասրահի հարմարավետությունը, բուժկետի ծառայությունը 4-ից երեք ուսանողն արտահայտել են բարձր գոհունակություն: Այսպես, օրինակ, ըստ աղյուսակ 1-ի 403 ուսանողից ընթերցասրահի հարմարավետությունը (նրա գործածականությունը) «բարձր» ու «շատ բարձր» են գնահատել **313-ը**, որը կազմում է ընդհանուրի **77,7%-ը**, բուժկետի ծառայությունից՝ գնահատած 363-ից՝ **279-ը** (76,9%), սննդի ու հանգստի պայմաններից գնահատած 354 ուսանողից «գերազանց» ու «լավ» են գնահատել **245-ը (69,2%)**: Լսարանների տեխնիկական միջոցները պատշաճ մակարդակի վրա են 403-ից 303 ուսանողի համար, բավարար վիճակում՝ 58-ի համար:

Մասնագիտական գրականության առկայությունից ու ջեռուցումից շատ գոհ են 10-ից 6 ուսանող, այսինքն այն փոքր ինչ զիջում է մյուս ռեսուրսներին: Սա ևս ունի իր տրամաբանությունը: Երկու այս ռեսուրսների վիճակի օբյեկտիվ պայմանավորվածությունը թերևս ավելի մեծ է, քան՝ մյուսներինը: Մասնաճյուղում հիմնականում դասավանդում է մայր բուհի ու տեղական արհեստավարժ, իրենց ոլորտում հեղինակություն վայելող պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը: Նրանք, որպես դասախոսական նորմ, աշխատանքային պայմանագրի պարտադիր պահանջ, բացի առկա հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականություն հանձնարարելուց, ստեղծում են սեփական դասախոսությունների տեքստերը, մեթոդական աշխատանքները և տարիների ընթացքում արդեն առկա են որոշակի ձեռքբերումներ: Սույն ուղղությամբ մասնաճյուղի ղեկավարության ջանքերը, որոնք ամրագրված են պաշտոնական հանդիպումներում ու փաստաթղթերում, տվել են իրենց դրական արդյունքները:

Նույնը վերաբերում է այնպիսի մի ռեսուրսի ապահովմանը, ինչպիսին ջեռուցումն է: Նույն խնդիրը բարձրաձայնվել է նաև նախորդ տարիների հարցումներում, փաստենք, որ նախորդ ուստարում վերակառուցվել է ջեռուցման համակարգը, որի հաշվին, մասնավորապես, էապես բարելավվել է նաև բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետների ուսումնական տարածքների ջերմային վիճակը, սակայն այն, ըստ ուսանողների դեռևս բավարար մակարդակի չէ՝ **3,56** միջին գնահատական:

**Աղյուսակ 2.**

<i>Բավարարվածությունը մասնաճյուղի.</i>	<b>4 գնահ.</b>	<b>5 գնահ.</b>	<b>4 և 5 գնահ.</b>	<b>%</b>
գիտամշակութային կյանքից	151	151	302	74,9%
մասնաճյուղում էթիկայի նորմերի պահպանումից	129	149	278	<b>69,0%</b>
անվտանգության ապահովման համակարգից	102	182	284	70,5%

Առնձնահատուկ ուշադրության է արժանի գիտամշակութային կյանքին և փոխհարաբերություններում էթիկայի նորմերի պահպանմանը տրված գնահատականները: Աղյուսակ 2-ում ներկայացված հարցման արդյունքները, ըստ որոնց գիտամշակութային կյանքը բարձր մակարդակի է 403 ուսանողից 302-ի համար (74,9%), իսկ մասնաճյուղում էթիկայի նորմերի պահպանումից շատ բավարարված են միայն 278-ը (69%):

Այսինքն, այս խնդիրն առանձին ֆոկուս-խմբերով քննարկման և պարզաբանման կարիք ունի, այսինքն անհրաժեշտ է հասկանալ ուսանողների մտահոգության պատճառը, հավաքագրել փաստեր էթիկայի նորմերի խախտման դեպքերի վերաբերյալ, ընկալել դրանց բնույթը, գտնել համակողմանի լուծումներ:

Մասնաճյուղի կայքի կառավարմանը տրված գնահատականները ուսանողների գնահատականներում նույնպես ամենաբարձրերից են:

**Աղյուսակ 3.**

<i>Բավարարվածությունը մասնաճյուղի էլ.կայքի /2016-17 ուստարի/</i>	<b>Գնահատականներ</b>			
	<b>4</b>	<b>5</b>	<b>4 և 5 գնահ.</b>	<b>%</b>
կառուցվածքից	86	244	<b>330</b>	<b>93,0%</b>
տեղեկատվության ստացման հարմարավետությունից	94	229	323	92,3%
տեղեկատվության լիարժեքությունից	109	201	310	90,1%
նորությունների լուսաբանումից	83	230	313	91,0%
կայքի ընդհանուր գրավչությունից	105	170	<b>275</b>	<b>80,4%</b>



Կառավարման գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և սովորողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից անհնար է թերագնահատել կայքի, որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: Ի պատիվ այս գործի պատասխանատուների, նրանց արհեստավարժ ու նվիրված գործունեության, ընդամենը 5 տարվա պատմություն ունեցող մասնաճյուղի կայքը դարձել է մասնագետների պատրաստման գործընթացում ուսանողների «սիրելին»: Ըստ մեր տվյալների, օրինակ, 2016թ. հարցման մեջ կայքից «շատ հաճախ» և «հաճախ» օգտվում են առկա ուսուցման հարցման 153 պատասխանողներից՝ 105-ը, «երբեմն»՝ 4-ից 1-ը, և «հազվադեպ» ընդամենը 9 հոգի: 2017թ. հարցման մեջ «շատ հաճախ»-ն ու «հաճախ»-ը 403 պատասխանողներից նշել են 203-ը, «երբեմն»՝ 147-ը, «հազվադեպ»՝ ընդամենը 53 ուսանող: Երեք հարցումներում էլ կայքի «որակները» ստացել են ամենաբարձր գնահատականը:

Բավարարվածությունը մասնաճյուղի է.կայքի /2016-17 ուստարի/	Միջին գնահատական				
	ԲԳՖ	Կ/ԱՖ	ՀԳՖ	ՏԳՖ	ԵՊՀ ԻՍ
կառուցվածքից	4,65	4,43	4,60	4,60	4,59
տեղեկատվության ստացման հարմարավետությունից	4,51	4,58	4,51	4,60	4,54
տեղեկատվության լիարժեքությունից	4,55	4,47	4,41	4,40	4,44
նորությունների լուսաբանումից	4,68	4,53	4,49	4,47	4,52
կայքի ընդհանուր գրավչությունից	4,26	4,24	4,24	4,11	4,21

Ուսումնասիրելով 2016-17 ուստարում առցանց հարցման մեջ կայքի առանձին բնութագրերին տրված գնահատականները, նշենք, որ նախորդ հարցումներում նույնպես այդ գնահատականները հինգ բալանի սանդղակով հիմնականում 4,5-ից բարձր են եղել: Վիճակագրորեն մասնաճյուղի ուսանողությունը հավաստում է, որ գրավիչ ու մատչելիությունը ապահովող կառուցվածքով և բուհական կյանքի նորությունների, նախատեսվող ու անցկացվող բազմաբնույթ միջոցառումների, գիտաուսումնական ոլորտում ձեռքբերումների մասին լիարժեք տեղեկույթի մատուցմամբ կայքը դարձել է մասնաճյուղի գործունեության արդյունավետության ապահովման գրեթե անփոխարինելի միջոց: Բավական է նշել, որ արդեն վերջին հարցման մեջ պատասխանող ուսանողների **90-93 տոկոսը** «գերազանց» և «լավ» գնահատական են շնորհել կայքի կառուցվածքին, տեղեկատվության ստացման հարմարավետությանը, նրա լիարժեքությանը, նորությունների լուսաբանմանը: Նման գնահատականները վիճակագրորեն ամենամոտն են իդեալականին: Եվ եթե սրանց համեմատ վերջին հարցման մեջ **20%-ը** պահանջել են կայքն ավելի գրավիչ դարձնել, այն ավելի շատ հնչում է որպես «կոմպլիմենտ», քան քննադատություն, քանի որ ապացույց է սույն ոլորտում ուսանողների մշակույթի զարգացման, պահանջարկի մեծացման:

Հայաստանյան կրթական համակարգի ներկա զարգացումներում կրթության որակի բարձրացման կարևոր գործոններից մեկը համարվում է սովորողների ինքնուրույնության խթանումը, ինքնակրթությունը: Դրա իրացման գլխավոր պայմաններից մեկը կրթության կազմակերպիչների կողմից կարելվույն համապատասխան օբյեկտիվ հնարավորությունների ապահովումն է, տվյալ ցանկության իրագործմանն օժանդակումը: Ահա լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ինստիտուտի ներմուծումը, ուսանողների կողմից պահանջարկի դեպքում դասախոսների, մասնագետների հետ լրացուցիչ հանդիպումների հնարավորության ստեղծումը, դրանց պարտադիր ու պարբերական գործառնական ապահովումը հենց այն ուղին է, որը կարող է բերել ուսանողների ինքնակրթության խթանմանը: ԵՊՀ ԻՍ-ի ղեկավարությունը տվյալ հարցին նվիրում է հնարավորինս շահախնդիր ուշադրություն: Կազմակերպչական, ուսումնա-մեթոդական խնդիրների հետ կապված քննարկումներում պարբերաբար առաջ է քաշվում ամեն կերպ ուսանողների մասնակցային մակարդակը բարձրացնելու, կրթա-մասնագիտական որակների ձևավորման հանդեպ ավելի ակտիվ դիրքորոշում ունենալու, անհատական պասիվությունը, երբեմնի ավելորդ կաշկանդվածությունը, երկչոտությունը հաղթահարելու հարցերը: Դրա դրսևորումներից մեկն էլ վերջին տարիների հարցումներում տարբեր երևույթների վերաբերյալ սովորողների իրազեկվածության, առկա հնարավորություններից լիարժեք օգտվելու փաստի ու պատրաստակամության բացահայտման հանդեպ դրսևորած ուշադրությունն է:

Հարցումներից ստացված տվյալները վկայում են, որ հատկապես շահախնդիր ուսանողության գերակշիռ մասն իրազեկված է և ուսումնական խորհրդատուի աշխատանքների, և լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մասին, տեղեկացված են ուսանողական կառույցների, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասին և օգտվում են նրանց ծառայություններից, տեղեկացված են մասնաճյուղի էլեկտրոնային կայք-էջի մասին:



Հարցման մեջ կարևորվում է նաև լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում ուսանողների ընդգրկվածության ուսումնասիրումը: 2017թ.-ի հարցմամբ 403 ուսանողից 311-ը փաստել է, որ ընդգրկված է խորհրդատվական տարբեր պարապմունքներում: Ընդ որում, առանձին ֆակուլտետների կտրվածքով այն կազմել է 71,4%-ից (Հումանիտար գիտությունների ֆակուլտետում) մինչև 84,4% (Բնական գիտությունների ֆակուլտետում): Մա էլ թերևս բնական է, քանզի բնագիտական «Ճշգրիտ» գիտելիքներն ավելի շատ լրացուցիչ պարզաբանման, հստակության կարիք ունեն: Ասենք նաև, որ, հարցման մեջ շատ բարձր է ուսանողների բավարարվածությունը կուրատորների, կուրսղեկների աշխատանքից ու ծառայություններից՝ 4,41 միջին գնահատական: Համեմատաբար, ուսանողները բավարարված չեն ուսանողական խորհրդի, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, իրենց կարիերային նպաստող ֆակուլտետներում իրականացվող աշխատանքներից, այսինքն միջին գնահատականները ցածր են 4-ից (3,6-ից 3,9):

Հետագա ուսումնասիրությունները պետք է նպատակաուղղված լինեն բացահայտելու այն գործոնները, որոնք կարող են նպաստել բոլոր ուսանողների իրազեկմանը և, ցանկության դեպքում՝ ընձեռնված հնարավորություններից լիարժեքորեն օգտվելուն:

Մասնվորաբար, դա վերաբերում է նաև դասախոսների անձին, լսարանի հետ արդյունավետ համագործակցելու մեջ նրանց արհեստավարժությանը, բարոյա-հոգեբանական որակներին:

Այդ նկատառումով, վերջին առցանց հարցման մեջ, առանձին հարցադրումով ուսանողներին առաջարկվել է գնահատել դասախոսի անձի ազդեցությունը մատուցված գիտելիքների յուրացման վրա.

Ձեր կարծիքով դասախոսի անձը ազդու՞մ է մատուցված գիտելիքների յուրացման վրա	ԲԳՖ	Կ/ԱՖ	ՀԳՖ	ՏԳՖ	Ընդ.
բոլորովին չի ազդում	3	1	3	2	9
որոշ չափով ազդում է	13	8	35	9	65
ազդում է	26	14	55	39	134
շատ է ազդում	35	17	96	47	195
<b>Ընդամենը</b>	<b>77</b>	<b>40</b>	<b>189</b>	<b>97</b>	<b>403</b>

Ինչպես տեսնում ենք, 403 ուսանողից ընդամենը 9 հոգի են կարծում, որ դասախոսի անձը «կապ չունի» մատուցված գիտելիքի յուրացման հետ: Երկու ուսանողից մեկի համոզմամբ այն շատ է ազդում (195 հոգի), հետևաբար՝ կարիք ունի լուրջ և գիտական ուշադրության: Այն ապացուցվել է նաև ֆոկուս-խմբերի մեթոդով մեր ուսումնասիրության մեջ, որտեղ հարցը առանձնակի քննարկվել է:

Հարցումներն այնքանով են կարևոր, որ գիտական հիմնավորում են տալիս սուբյեկտիվ գնահատականներին: Բավական է փոքր ի շատե տեղյակ լինել բուհական կյանքին, ուսումնագիտական գործընթացներին, դրանց կազմակերպման ու անցկացման նրբություններին, անյուհետև մի քանի օր շրջել մասնաճյուղի տարբեր ֆակուլտետներում, մասնաշենքերում, դիտել լսարաններում ու միջանցքներում տիրող կրթական ու բարոյահոգեբանական մթնոլորտը, իրազեկ դառնալ կիսամյակների ընթացքում կազմակերպվող կրթա-մշակութային, ժամանցային միջոցառումներին, որպեսզի համոզվեք, որ գտնվում եք ժամանակակից կրթօջախում՝ ցանկացած իմաստով: Այն ավելի ցայտուն է դառնում, երբ մտովի համեմատում ենք ուրիշ մի շարք նմանօրինակ բուհերի հետ: Իրազեկվածներն այդ պատճառով չեն զարմանում, որ մասնաճյուղը ներկայումս ունի հանրապետությունում լավագույն ընդունելություններից մեկը: Թե ուսանողության գնահատականները, թե այդ առիթով ասվածը գերագնահատական չեն նաև այն պատճառով, որ էապես չեն տարբերվում մասնաճյուղին պատկան մարմինների, մայր բուհի ղեկավարության, անձամբ ռեկտորի կողմից տված գնահատականներից:

Հետևաբար, ելնելով հարցման արդյունքներից կարելի է պնդել, որ ուսանողության գիտակցության մեջ ավելի շատ իշխում է այն կարծիքը, թե ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ներկայումս կառավարվում է հիմնականում բանիմաց ու բարյացկամ աշխատակազմի կողմից, որը, առանց էական թերությունների ու վրիպումների ձգտում և կարողանում է ապահովել ստորաբաժանումների անխափան գործունեությունը:

Բացի կարծիք-գնահատականներից, հարցման կազմակերպիչներն ուսանողներին հնարավորություն են ընձեռել ներկայացնել առաջարկներ, որոնց իրագործումը կարող է նպաստել նրանց կրթական կարիքների ավելի լիարժեք բավարարմանը, ժամանակակից աշխատաշուկայում ավելի պահանջարկված դառնալուն: Հիմնվելով նաև նախորդ հարցումներում առաջարկների իմաստի և ուղղվածության վրա, վերջին առցանց հարցման մեջ կատարված առաջարկները փորձել ենք տեսակավորել և հնարավորինս ընդհանրացնել: Դրանք վիճակագրական առումով շատ չեն: Սակայն, նկատի ունենալով մասնաճյուղում իրագործվող բարեփոխումների ուղղվածությունը, մասնավորաբար, արդեն ներդրված «Կրթական ծրագրերի պատասխանուտու»-ի ինստիտուտի արդյունավետ գործառման յուրահատկությունները, կարող են դառնալ ուշադրության արժանի՝ գոնե պատասխանատուների մակարդակում քննարկման ու

վիճարկման տեսանկյունից: Վիճակագրորեն փոքրաքանակ առաջարկությունների պայմաններում սա հատուկ ենք ցանկանում ընդգծել, հետևյալ փաստարկմամբ:

Մասնաճյուղի գործունեության, «արտաքին աշխարհի» հետ նրա կապերի, համագործակցության խնդիրներին նվիրված հարցումներում, որոնք անց են կացվել 2011 թվականից սկսած, թեկուզ և քիչ, բայց եղել են դեպքեր, երբ մասնաճյուղի ներքին ու արտաքին շահակիցների առանձին ներկայացուցիչներ, սեփական անիրազեկությունն ու պասիվությունը, անտարբերությունն ընդհանուր հիմնահարցերի հանդեպ «քողարկել» են արտաքին հանգամանքների քողի տակ: Օրինակ, մասնաճյուղի կայքում, կամ ցանկացած ընդհանուր կամ մասնագիտական ամբիոնում, դեկանատում տարիներ ի վեր արտացոլված են և պարբերաբար նորացվում են բուհի գործունեության, ուսանողներին հուզող փաստերի ու խնդիրների վերաբերյալ այնպիսի լիարժեք տեղեկություններ, որոնց մասին հարցերի պատասխաններում պետք է որ անիրազեկություն չդրսևորվեր: Սակայն, մի շարք ուսանողներ, թեկուզ փոքրաքանակ, պարբերաբար պատասխաններում դրսևորում են անիրազեկություն, անտեղյակություն, պատճառների մեջ հղվելով իրենցից անկախ արտաքին հանգամանքներին (ամբիոնից չեն հաղորդել, ուսխորհուրդը չի տեղեկացրել և այլն): Այդուհանդերձ **կան առաջարկներ**, որոնք թերևս մասնաճյուղի ներկա կրթական զարգացումների համատեքստում են: Նախ և առաջ դա վերաբերում է համապատասխան մասնագիտության կրթական ծրագրի կատարելագործմանը, մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաների ու դասաժամերի, տեսական ու գործնական գիտելիքների հարաբերակցության օպտիմալացմանը, առարկայական ծրագրերի բովանդակությանը, թեմատիկ պլանավորմանը և այլն: Այն, ինչը մասնաճյուղի ղեկավարության ու շաղկապության կենտրոնում է և ընթացիկ առօրյա մտահոգություններից մեկն է: Ապացույցներից մեկը կիսամյակի ընթացքում կրթական ծրագրերի կատարելագործմանը նվիրված բազմաթիվ քննարկումներն են, որի վերաբերյալ տեղեկությունները մշտապես ներկայացվում է մասնաճյուղի կայք էջում:

Բերենք օրինակներ ուսանողների գրած առաջարկներից:

**Բնական գիտությունների ֆակուլտետի** (ԲԳՖ) ուսանողի կարծիքով Թեոդոլիտային և մենզուլային հանույթ առարկան կարելի էր միավորել Տախեոմետրական հանույթ առարկայի հետ, անցնել համատեղ: Մեկ ուրիշ ուսանող գտնում է, որ այդ նույն առարկային տրամադրված ժամաքանակն ավելին է, քանի որ նրա բովանդակության ծանրակշիռ մասն ուսումնասիրել են նաև Գեոդեզիայի հիմունքներ առարկայի շրջանակներում: Մեկ այլ ուսանող համարում է, որ Էկոլոգիա, գեոէկոլոգիա և հանրային ռեսուրսների կադաստր առարկաներն իրար կրկնում են:

**Կիրառական արվեստի ֆակուլտետի** (Կ/ԱՖ) ուսանողը համարում է, որ թեմատիկ առումով կրկնվում են՝ քնագիտության կոնցեպցիա և Էկոլոգիա առարկաների որոշ հարցեր, ինչը հիմնավոր չէ: Միաժամանակ նա ցանկանում է, որ ուսումնական կրթական ծրագիրը նախատեսի գիտելիքներ անատոմիայից, մեկ ուրիշն առաջարկում է ավելացնել դիզայնի ուղղությամբ առարկաների քանակը:

**Տնտեսագիտության ֆակուլտետի** (ՏԳՖ) ուսանողը կարևորում է Գործավարություն օտար լեզվով առարկայի հայերեն լեզվով դասավանդումը՝ ինչը չկա: Մեկ ուրիշը գտնում է, որ Էկոնոմետրիկա-1 առարկայի դասավանդմանը պետք է հաջորդի Վիճակագրությունը, հետո նոր Էկոնոմետրիկա-2-ը, մինչդեռ այդպես չէ: Երրորդը համարում է, որ Առաջին բուժօգնություն և Քաղ. Պաշտպանություն առարկաների թեմաները որոշակիորեն կրկնվում են, որը՝ էլի չպետք է

լինի: Մյուսն ավելի նպատակահարմար է տեսնում Մասնագիտական ներածություն ու Սերվիսագիտություն առարկաների միավորումը:

Ուսանողների մի մասի մոտ մեկ ուրիշ միտում է ուսումնառության մեջ ոչ մասնագիտական առարկաների կարևորության վերաբերյալ:

1. **Հումանիտար գիտությունների ֆակուլտետի** (ՀԳՖ) ուսանողն առաջարկում է ոչ մասնագիտական առարկաների քննություններն այդքան էլ չբարդացնել և հարցերի քանակը քչացնել: Մեկ ուրիշն ավելի ճիշտ է համարում, օրինակ Բնագիտության կոնցեպցիաներ, Էկոլոգիա և նմանատիպ մյուս ոչ մասնագիտական առարկաները ոչ թե ողջ կիսամյակի ընթացքում դասավանդվեն, այլ միջոցառումների կամ մի քանի օրյա սեմինարների տեսքով:

2. **Տնտեսագիտության ֆակուլտետի** ուսանողը համաձայն է, որ իրենց ուսումնական շաբաթական ժամաքանակի ավելացման հաշվին անցնեն լրացուցիչ մասնագիտական դասընթացներ:

3. **Բնական գիտությունների ֆակուլտետի** ուսանողը գտնում է, որ բակալավրական ուսուցման ընթացքում չպետք է կրկնվեն դպրոցում անցած առարկաների բովանդակությունը:

Ի լրումն ուսանողներին հարց էր տրվել, թե ոչ մասնագիտական առարկաներից որոնք են կարևորում իրենց ուսման համար, և, որոնք օգտակար չեն համարում: Հարցմանը մասնակցած 403 ուսանողների պատասխաններից 32-ում (8%) կարևորում են բոլոր առարկաները, իսկ 6-ը (մոտ 1,5%)՝ չեն կարևորում ոչ մի ոչ մասնագիտական դասընթաց: Ըստ որում, այս 6 ուսանողից 5-ը՝ հումանիտար գիտությունների ֆակուլտետից են: Ծայրահեղ այս գնահատականների կողքին նշենք մի քանի վիճակագրորեն «իմաստ» ունեցող տվյալներ որոշակի առարկաների վերաբերյալ: Այսպես օրինակ, ոչ մասնագիտական առարկաներից ամենաշատը (21 պատասխան՝ 403-ից) կարևորում են Օտար լեզուն, այնուհետև՝ Հայոց լեզուն (15), Էթիկան (13) և Ռուսաց լեզուն (13): Ինչպես տեսնում ենք ոչ մասնագիտական գիտելիքների կարևորումը բակալավրական ուսուցման բաժնի ուսանողության կողմից լիովին համահունչ է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին, այն, ինչ առավելագույս ունի գործնական, գործածական բնույթ:

Ոչ մասնագիտական առարկաների մեջ 12 ուսանող ոչ օգտակար է համարում Ֆիզկուլտուրա առարկան (6-ը՝ ՀԳՖ-ից, 5-ը՝ ՏԳՖ-ից), 7-ը՝ փիլիսոփայությունը (5-ը՝ ՀԳՖ-ից, 2-ը՝ ՏԳՖ-ից), 6-ը՝ Հայոց պատմությունը (4-ը՝ ՏԳՖ-ից):

Բերենք ուշադրության արժանի որոշ առաջարկներ, որոնք կատարվել են ուսանողների կողմից հարցման բաց հարցերի շրջանակներում և որոնք վերաբերում են մասնաճյուղի ստորաբաժանումների աշխատանքին և տրամադրվող ռեսուրսներին:

Մասնավորաբար,

- ուսանողների մի մասը շահախնդիր է, որպեսզի ավելի հարստացվի մայրենի լեզվով թարգմանված մասնագիտական գրքերի գրադարանային պաշարը,

- Քարտեզագրություն և կադաստրային գործ և Կիրառական արվեստի մասնագիտության ուսանողները ցանկանում են ուսումնառության արդյունքում իրենց շնորհվի նաև մանկավարժի որակավորում:

- մի շարք ուսանողներ ցանկանում են, որ ուսանողները հնարավորություն ունենան շաբաթվա մեջ որոշակի ժամերի դասերից հետո իրենց հուզող հարցերի շուրջ շփվել դասախոսների հետ:



- մի շարք ուսանողներ պատրաստակամ են մագիստրոսական կրթությունն անցնել մասնաճյուղում և առաջարկում են դրա հնարավորություն ստեղծել:

- ուսանողները գտնում են, որ ժամանակի պահանջն է ու հարկավոր է, որ կրթական ծրագրերում հնարավորինս ներմուծվեն հոգեբանական բնույթի դասընթացներ, որը կօգնի նրանց անկաշկանդ շփվել դասախոսների հետ,

- տարբեր ֆակուլտետներից 15 առաջարկներում, այս կամ այն կերպ ցանկություն ու պահանջ է հնչեցվում ավելի շատ տեղեկանալու ուսանողների համար իրականացվող ծառայությունների, ուսանողական խորհրդի միջոցառումների մասին, ըստ որում՝ այդ միջոցառումներին ավելի ակտիվորեն մասնակցելու նպատակով:

- մի շարք պատասխաններում կա խնդրանք. խտրություն չդնել և բոլոր ուսանողներին ժամանակին իրազեկել իրենց հուզող խնդիրները շոշափող քննարկումների, ժամանցային միջոցառումների մասին:

### ***Ելնելով ասվածից առաջարկվում է.***

- «Կրթական ծրագրի պատասխանատու»-ների և մասնագիտական ամբիոնների ներկայացուցիչների հետ քննարկել ուսումնական պլաններում առանձին առարկաների կրկնողության կամ թեմատիկ բովանդակության անօգտակարության, ոչ մասնագիտական առարկաների կարգավիճակի փոփոխման վերաբերյալ ուսանողների արտահայտած մտահոգությունները: Դրանց հիմնավորվածությունը մասնագիտորեն ապացուցվելու դեպքում ուսումնա-մեթոդական վարչության հետ քննարկել ժամանակագրական առումով տվյալ առաջարկները հաշվի առնելու և ուսումնական պլաններում փոփոխությունները ներմուծելու օբյեկտիվ հնարավորությունները, այդ մասին իրազեկելով տվյալ մասնագիտությունների հետ առնչություն ունեցող ներքին ու արտաքին շահակիցներին: Նույնը վերաբերում է այն դեպքին, երբ մասնագիտորեն ու կազմակերպչորեն հիմնավորվում է նման փոփոխությունների անօգտակարությունը կամ անհնարինությունը:

- Մասնաճյուղի գրադարանի և մասնագիտական ամբիոնների պատասխանատուների հետ քննարկել մայրենի լեզվով մասնագիտական գրականության համալրվածության խնդիրը և հարկ եղած դեպքում, հասցեական պատվերների տեսքով մշակել միջոցառումներ ու ժամկետներ, մասնաճյուղի ֆինանսա-տնտեսական ու հրատարակչական հնարավորությունների շրջանակում նման գրականությամբ գրադարանային պաշարները փոխլրացնելու համար:

- Մասնաճյուղային և ֆակուլտետային ուսանողական խորհուրդների ու Կարիերայի կենտրոնի ներկայացուցիչների հետ քննարկել սեփական գործունեության, իրագործվող միջոցառումների վերաբերյալ ուսանողության առանձին ներկայացուցիչների անտեղյակության օբյեկտիվ ճշմարտացիությունը այն դեպքում, երբ նրանք շահախնդրորեն ցանկացել են ժամանակին այն իմանալ: Դրանց հիմնավորվածության դեպքում մշակել ուսանողության ավելի լայն շրջաններին նախատեսվող միջոցառումների վերաբերյալ ժամանակին իրազեկելու ու դրանց մեջ նրանց ներգրավելու հնարավորությունները և դրանք կյանքի կոչել որոշակի ժամանակահատվածում:

-Կարևորելով ուսանողների ակտիվ ու իրազեկ մասնակցությունը նրանց ներգրավել իրենց առնչվող խնդիրների քննարկման և լուծումներ գտնելու գործընթացի մեջ :

***Անփոփելով*** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ուսանողության բավարարվածության վերաբերյալ 2017թ.-ի հարցման արդյունքները կարող ենք նշել հետևյալը.

- Մասնաճյուղի ռեսուրսների և ծառայությունների (ներառյալ կայքը) վերաբերյալ տեղեկացվածության ու նրանց գործունեությունից բավարարվածության տվյալների համադրումը վկայում է, որ ԵՊՀ ԻՄ ուսանողության հասարակական գիտակցության մեջ ակնհայտորեն գերիշխող է այն կարծիք-գնահատականը, թե բուհը կառավարվում է հիմնականում արհեստավարժ անձանց և ստորաբաժանումների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացումներին համահունչ և ժամանակակից պահանջներին համապատասխան;
- Մասնաճյուղի կայքի կառավարմանը տված բարձր գնահատականները վկայում են, որ այն իրապես դարձել է ուսումնական և ճանաչողական գործընթացների բաղադրատարր, գիտելիքների ձեռքբերման և մասնաճյուղի առօրյայի մասին լիարժեք իրազեկվածության արդյունավետ միջոցներից մեկը,

**Առաջարկվում է.**

- Նմանօրինակ հետագա հարցումների արդյունքների հավաստիության աստիճանը մեծացնելու նպատակով, շահախնդիր առաջադիմող ուսանողներից և մագիստրանտներից ընթացիկ ուսումնական տարում ձևավորել սոցիոլոգիական խումբ;
- Հարցման արդյունքների հիման վրա մասնաճյուղում իրագործված ցանկացած անդրադարձ, դրանից ստացված արդյունք դարձնել լայն իրազեկման առարկա, ինչը կբարձրացնի սոցիոլոգիական հարցումների հեղինակությունը և կնպաստի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանմանն ու զարգացմանը:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***